ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

24 հունվարի 2019 թվականի № 18-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 4-ին թիվ 165-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.12.2017թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 1 534.1 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 1 321.9 (մեկ միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-029 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018թ. դեկտեմբերի 4-ի թիվ 165-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը, քննարկելով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի արդյունքները գտավ, որ վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից գումարն ամբողջությամբ մարվել է, ինչը հաստատվում է սնանկության գործով կառավարիչ Անդրանիկ Ելինյանի կողմից ներկայացված վճարման անդորրագրերով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 4-ին թիվ 165-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

1/24/2019

X

VERIFIED OCSP 24-Jan-19 12:04:31 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118